

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ԿԱԹՈԼԻԿ ՈՒԽՏԱՎՈՐՆԵՐԻՆ

Մայիսի 23-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Ֆրանսիայից եկած ուխտավորներին՝ գլխավորությամբ Ֆրանսիայում Հռոմեակաթոլիկ Եկեղեցու Թուլոնի թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Ժոզեֆ եպիսկոպոս Մեդեկի:

Ընդունելության սկզբում Ժոզեֆ եպիսկոպոսը շնորհակալություն հայտնեց Ամենայն Հայոց Կաթողիկոսին այս հանդիպման համար և, ներկայացնելով ուխտավորներին, ասաց. «Եկել ենք հաղորդ դառնալու Հայ Եկեղեցու բազմադարյա սրբություններին, այցելելու ձեր վանքերն ու եկեղեցիները, առավել ծանոթանալու հայ մշակույթին ու պատմությանը»: Եպիսկոպոս Մեդեկն իր խոսքում մասնավորաբար շեշտեց Թուլոնում հայ և կաթոլիկ եկեղեցականների միջև առկա ջերմ հարաբերություններն ու համագործակցությունը:

Իր խոսքում Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ուխտավորներին ներկայացրեց Հայ Եկեղեցու պատմության տարբեր դրվագներ, անդրադարձավ Հայ Եկեղեցու հոգևոր կենտրոն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի առաքելությանը համայն հայության կյանքում: Վեհափառ Հայրապետը նաև գոհունակություն հայտնեց այն ջերմ հարաբերությունների համար, որ առկա են Հայ և Հռոմեակաթոլիկ Եկեղեցիների միջև:

Հանդիպմանը խոսվեց դարերի փորձությունով անցած հայ-ֆրանսիական բարեկամության և ներկայիս երկու պետությունների միջև ծավալվող արդյունաշատ համագործակցության մասին: Նորին Սրբությունը գնահատանքով անդրադարձավ նաև այն աջակցությանը, որ Ֆրանսիայի իշխանությունները մասնավորաբար ցուցաբերել են Հայաստանի նկատմամբ անկախության օրերից ի վեր կյանքի տարբեր որլորտներում:

Վերջում Նորին Սրբությունը պատասխանեց ուխտավորների հացերին:

Հանդիպումն ավարտվեց Տերունական աղոթքով, ապա Ամենայն Հայոց Հայրապետն օրհնեց ուխտավորներին: